6. ՍԱՐԳԻՍ

Ժամանակով մեկ անվոր Սարդիս տղե մա կէղնի։ Հ'ինք շատ աղքատ կէղնի։ Կմտածա ուր վիճակի վրրեն՝ թե ես ինչպե՞ս պտի ապրիմ։ Ըն մեկ օր կէլնի կընդնա ճամբախ ու կէրթա։ Մե մեծ քաղքիմ' ա ռաստ կիդա։ Տեսնա օր թե հանդի թոռչիկ ձուկ կթալին։

Տղեն էլ կըսե.—Վալա՛, պտի ես լէ մե թոռ մ'առնիմ։

Կառնի թոռ, ձուկ թալա, էրկու հատ ջրհուդ վիճակ բացող կէղնին։ Վիճակ բանան էդ ջրհուդներ։ Կիշքին տեսնան օր թե ձուկ մը կա էդ ծովու մեջ, ուր փորու մեջ թաս մա կա։ Ապա ըսեց՝ «Մենք ի՞նչ էնինք ըդրան, մենք պտի մեկ թոռչի մըղի բռնինք, հետ բաղըռինք, թե օրական ի՞նչ խըդար ձուկ օր բռնեցիր, մզիկ բերիս, մենք կառնինք»։

Կէլնին կէրթան ըդ Սարդիս անվոր տղի մոտ։

Կասին.—Սարդի՛ս, ինչքան օր ձուկ էլավ, դու կբերիս, մենք կառնենք։

Կըսե.—Աղե՛կ։

Սարդիս կէրթա, ձուկ թալա թոռ, ամեն օր իրեք հատ կէլնի։ Իրեքից նա՛ էվել կէղնի, նա՛ պակաս։

Հ'ըմեն օր տանի կիտա ջրհուդին։ Շատ ու քիչ, էդ մարդ տանի կիտա ջրհուդին։ Մե ժամանակ ըդտեղ կընցընա։ Ըն մեկ օր

կթալա, իրեք հատ ձուկ կէղնի։ Սարդիս կտեսնա, օր էն մեկ ձուկ շատ խորոտիկ, պատվական կէղնի։

Կըսե.—Վալլա՛, ես ըսօր իդա մեկ ձուկ ես ուտիմ։ Կէլնի զէրկուս կտանի, կիտա ջրհուդին։ Մեկ լէ կտանի կղնի ուր օթախ։

Ջրհուդ կըսե.—Ուրիշ դայ իրեք ձուկ էր, հ'ըսօր էրկուս իս բերեր ես։

Սարդիս կըսե թե.—Ըն մեկ ես հ'ըսօր պիտի ուտիմ։

Ջրհուդ իմացավ օր՝ թե էգի իր ուղած ձուկն ա։

Ջրհուդ ըսեց տղին թե.—Ա՛յ տղա, ուրիշ ժամանակ քըզիկ կիտենք հինգ օսկի, հ'ըսօր կիտանք քըզիկ տաս օսկի, ըդ ձուկ մըզի բիր։

Տղեն ըսեց.—Ես ուխտ իմ էնի, պիտի ուտիմ։

Ջրհուդ ըսեց թե.—Ա՛ռ քզիկ քսան օսկի, գնա առ բե, արի՛։

Տղեն ըսեց.—Անկարելի՛ ա, հարիր օսկի լը դու տաս, ես ըն ձուկ չըմ իտամ։ Ծովուց օր էլավ, ես ուխտ էնեցի, էն ապով էլ չը՛մ իտամ։

Տղեն ըդմալ պատասխանեց ջրհուդին ու էկավ ուր օդեն։ Եբ օր էկավ ուր օդեն, բերեց ձկան գլուխ կտրեց, ձկան փոր օր թե ճըղեց, տեսավ օր թե մե օսկիե թաս մա միշեն էլավ։

Տղեն օր թե թաս տեսավ, էնքան ուրախցավ, հ'էլավ լցեց։ Ասեց. «Էդ թասով ջուր պտի խմիմ»։ Ջուր օր լցեց թասի մեջ, դրեց բերնին օր պիտի խմեր, շուր էղավ օսկի ու ջընգջընգաց իդրա ծոց։

Տղեն ըսեց.—Աստվա՛ծ նոր տվեց ընձիկ։

Գնաց էրկու կուժ ջուր պերեց տղեն, լցեց ու էդ թասով չափեց, էդ էրկու կուժ շուր հ'ըմեն էղավ օսկի։

Վերցուց էմ լէ դարտըկեց կըժներ ու դրեց ուր օդեն պայեց, դուռ փակեց ու էլավ գնաց։ Գնաց էդ քաղքի մեջ օլըրգավ, առավ մե շուշեմ՝ էրկուս գինի ու ընկավ ճամբախ՝ ծոու պես ու գնաց։

Գնաց մեկ սարիմ՝ ա ռաստ էկավ։ Գնաց սարի կուշտ նստավ, խմեց գինին ու ըդ տղեն ծռավ, հ'էլավ ընկավ ճանապարհ ու գնաց։ Գնաց Փիլիպոս թագավոր մը կար։ Մոտկցավ ըգըրա քաղքին։ Մե հ'աղբուր մա կար ըդա տեխ։ Էրկու հատ էլ ծառ կար ըդա տեխ։ Տղեն էր խելըռավ ու պատավ հ'աղբըրին։ Հանեց ուր ծոցեն զէդ թաս, զարկեց աղբըրի մեջ ու դարտըկեց։ Զարկեց ու դարտըկեց։ Զարկեց ու դարտըկեց։ Հ'աղբըրի մեջ կուշտ լընցավ

օսկի։ Տղեն ըդտեխ թըխ մնա, դառնանք Փիլիպոս թագավորի աղջկան։

Փիլիպոս թագավոր հ'ինք ա, էդ մեկ աղջիկ։ Շատ էդ աղջկա հաղ կէնա։ Աղջիկ էլ ինչ օր կէսա, պապ էլ ուր խաթր չկպի։

Ըն մեկ օր թագավորի աղջիկ ըսեց թե.—Օր ընձիկ մեկ ֆայթոն մա տվեք։ Ես պտի էթամ դաշտ օլորտիմ։ Կէլնին ֆայթոն գտնան ըդրան, կնստի մեջին ու կէրթա։ Կէրթա ըդ չոլի մեջ։

Ֆայթոնչուն կըսե.—Դու ըստեղ կանգըցու, ես կէրթամ հ'աղբըրի վրեն ջուր խմիմ ու դառնամ։

Աղջիկ գնաց տեսավ օր թե տղե մա պառկուկ էդ հ'աղբըրի վրեն, կտեսնե օր թե թասմ' ուր ձեռք կա։ Համա կղարկա մեջ հ'աղբըրին, կդարտկա ու կանա օսկի։ Էդ աղջկա աչք կիյնա էդ թաս։

Կըսե.—Տղա՛, դու զէդ թաս չը՞ս իտաս ընձիկ։

Կըսե.—Կիտա՛մ։

— Հապա,—կըսե,—ի՞նչ կուզիս։

Ըսեց.—Մեկ հախ մը պառկիր իմ կուշտ, կիտամ քզիկ։

Ըսեց.—Թը՛խ էզնի։

Էլավ մե սահաթ մ'ա պառկավ ըդրա կուշտ ու առավ զթաս, գնաց։

Տղեն խելքի էկավ, էլավ տեսավ օր թաս չիկա, տղեն շիվարավ ուր հալի վրեն։

Աղջիկն առավ ուր թաս ու գնաց։ Գնաց ուր պապու քաղաք։ Մենք դառնանք տղի վրեն։ Տղեն գինին օր գլխուց թափավ, ըսեց. «Հե՛յ վախ, իմ թաս էլ գնաց ձեռքես, ապա,—ըսեց,—ես իմա՞լ էնիմ։ Էմ լէ պտի դառնամ էրթամ իմ հ'առաջի քաղաք»։

Տղեն գնաց ուր հ'առաջի քաղաք էլավ դուս։ Բացեց ուր օգեն։ Հանեց ուր էրկու կուժ օսկին։ Ծախս էնեց, կերավ, էմ լէ աղքատցավ։

Դառնանք աղջկա վրեն։

Աղջիկ, երբ օր գնաց տուն, ին ամիս մնաց, էրկու հոգովցավ։ Ջուաբն տարան թագավորին թե.—Փիլիպո՛ս թագավոր, քու աղջիկ անկարգվել էրկու հոգովցեր ա։

Էլավ, կանչեց էրկու մարդ բերեց.—Իգա աղջիկ կտանիք կէրթաք, կկապիք ձեր ձիու պոչեն, սար կզարկիք, ձոր կզարկիք։ Իրկուն ձեր ձիաներու պոչեր կլվաք ու կիգաք։

4—276

Էդ ձիավորներ խղճով են։ Մեկ մեկին խոսաց.—Շա՛տ էլ թագավոր մզիկ ասեց. «Տարե՛ք, գացե՛ք, սպանե՛ք»։ Մենք ըդրա մեղք հ՚ո՞րի թորկինք մեր վիզ։

Տարան ըդրան, գացին սարի մը մեջ, մեշա էր։ Թորկեցին էդ մեշի մեշ ու դարձան էկան։ Գացին թագավորին խոսացին թս.

—Տարա՛նք, սպանեցի՛նք ու էկա՛նք։

Թագավոր ըսեց.—Ազե՛կ էնեցիք։

Դառնանք թագավորի աղջկա վրեն։ Թագավորի աղջիկ էլավ ընկավ էդ մեշի մեջ։ Իրեք օր ու իրեք գիշեր օլրտավ։ Թագավորի աղջիկ էր՝ թուշար դուա չէր էլեր էր։ Պառկավ ադտեխ մեշի մեշ, քնավ։ Լուսուն էլավ աղջիկ, քիչ մտածեց, ըսեց. «Ես իմա՞լ էնիմ օր զէգ տղեն գտնամ։ Պտի ես էթամ, յոթ ճամփու կցվան շինութներ սուկիմ, ճաշարաններ բանամ, որ էկավ հ՚ընցնա, ուտա ու խմա, ուր գլխու գալած ընձիկ ասա ու էրթա։

Էլավ աղջիկ գնաց, յոթ ճամփու կցվան։ Նստավ մեկ հ՚աղբրի վրեն։ Թաս ծոցեն հանեց, լցուց ջուր, դարդրկեց ու էղավ օսկի։ Կանչեց ուսթեք, բերեց էկան։ Լավ շինութներ սուկեց, օր խրդ ուր պապու շինութներ մե խաթ լը պանցր։

Ախչիկ պառկավ, բերեց տղե մա։ Ախչիկ էդ շինութներ օր պատրաստեց, ըսեց. «Պտի պատրաստիմ ես կիրակուլի տեղ, իգա յոթ ճամփու կցվան, հ՚ընցնող-դառնող թրխ ուտա, ուր գլխու գալած ընձի պատմա»։

Շատ ժամանակ մեշտեղ կընցնա։ Դառնանք տղի վրեն։ Ադ Սարդիս գնացեր ուր օսկիք կերեր էր։ Օսկիք թրմավ, շատ շիվար էղավ։

Ադ ախչկա ձեն ադ Սարդիս հասկցավ, թե օր ֆլան ճամփու վրեն ճաշարան ա բացած։

Սարդիս ըսեց. «Էլնիմ էթամ ես լէ էն ճաշարան, ուտիմ, տեսնամ»։ Էլավ Սարդիս մեկ օր ճանապարհ ընկավ։ Մեկ օր էկավ հասավ ադտեխ, բայց ախչիկ մարգանակ շոր ա հագուկ։ Պատահավ օր ադ իրկուն Սարգիս ադտեխ էկավ, աղջկա աչք առնելուն, զտղեն ճանչցավ։

Ծառաներուն ըսեց.—Կտանիք իգա մարդուն լավ յաթղի վրեն կպառկրցուք։ Թամիզ կերակուրներ կիտաք ադ մարդուն։

Տարան ծառաներ զէգ մարդ դրեցին մեկ լավ օդի մը մեջ։ Տվեցին լավ յաթախներ, բերեցին կերակուլ կերավ։ Հ՚իրիկուն

պառկելու ժամանակն էր, ծառաներ գացին քնան։ Ադ աղջիկ առավ զուր տղեն ու գնաց էդ մարդու օդեն։

Ըսեց.—Ա՛յ մարդ, դու բարով իս իկեր իս։

Տղեն աղջկան ըսեց.—Մըշ բարուն կէնաս։

Ըսեց.—Դու դինա՞ս ըդա ճաշարան ընչի իմ պատրաստեր իմ։

Ըսեց.—Չէ՛, ի՞նչ գինամ։

Ըսեց.—Պարտատեր իմ օր թե ով օր իգա, ուտա, պտի ուր գլխի գալած ընձիկ պատմա ու էրթա։ Դե քու գլխի գալած ընձիկ էսօր կպատմիս։

Տղեն պատասխանեց աղջկան թե.—Ես շատ դարդի տեր իմ,—ըսեց,—իսնե վաղ կեցի։

Ըսեց.—Անկարե՛լի ա, պըտի էսօր քու գլխու գալած ընձիկ ասես։

Ըսեց.—Իմ գլխու գալած. ես թոռչի ինք, թալեցի ձուկ հ'ըմեն օր, ըն մեկ օր մեկ խորոտիկ ձուկ մը էլավ, ես լէ ըսեցի, պտի իտա ձուկ տանիմ էրթամ ուտիմ։ Տարա գացի զձուկ օդեն։ Պատռեցի ձկան փոր, տեսա, օր մա թաս մ'էլավ։ Ես լէ ըսեցի. «Ինչ խորոտիկ թաս մա։ Կանի փշուր մա շուր խմեմ ուրնով»։ Եբ օր շուր խմեցի, ադ թասի շուր էղավ օսկի։ Ես էլ խնդացա ադ թասի վրեն ու գացի առա գինի, էրկու շուշա գինի առա ու ընկա ճամբախ, գացի։ Գացի մե սարի ռաստ էկա։ Ադ տեխ դրեցի զէդ էրկու շուշա գինին, խմեցի։ Ադ գինուց իմ խելք թոբցի։ Հ'էլա ընկա ճամբախ ու գացի։

Աղջիկ կասե.—Դու բարով էկար, դե ասա, տեսնանք։

Տղեն.—Ընկա ճամբու հետ ու գացի։ Գացի Փիլիպոս թագավորի հողի մեջ, մոտկցա ուր քաղքին, տեսա օր էրկու ծառ ադտեխ կար, ադ ծառերու մոտ անուշ հ'աղբուր մա կար։ Ես էլ ադ հ'աղբրրից շուր խմեցի ու հանեցի թասը շիբես ու զարկի հ'աղբրրի մեջ ու դարդրկեցի։ Դարդրկեցի էդ հ'աղբրրի կուշտ հ'ըմեն էղավ օսկի։ Տեսա օր մեկ աղջիկ էնդեհեն էկավ, ես էլ խմուկ ինք։ Խելք չունենք։ Աղջիկ ըսեց. «Էդ թաս չրս իտա՞ ընձիկ»։ Ես լէ ըսեցի. «Օր թե մեկ անգամ պառկիս իմ մոտ՝ կիտամ քըզիկ»։ Աղջիկ ըսեց. «Հա, կպառկիմ»։ Ես պառկա աղջկա մոտ։ Մե սահաթվա մա չափ։ Աղջիկ էլավ առավ զթաս ու գնաց։ Ես խելքի էկա։ Էլա դարձա ու գացի էմ լէ հառջի քաղաք։ Քիչ օսկի ընձի կար ընտեխ պահուկ։ Գացի կերա, թմավ. հասկցա օր ասեցին, թե մե ճաշարան մա բացվեր ա, ես լէ խեղճ մացեր ենք, էլա խասդ էնեցի

ադ ճաշարանին ու էկա։ Թե կհարցուս իմ գլխի գալած, իդա ա։

Աղշիկ էլավ մեկ էդ թասով լցեց շուր, տվեց ըղըրան։

Տղեն էնեց ուզեց շուր խմելւ Ադ շուր էղավ օսկի։ Լցվավ տղի ծոց։ Տղեն սրտեն մեկ ա՜խ մա քաշեց։ Ախչիկն ըսեց թե.—Ընչի՞ ա՜խ քաշեցիր։

— Ապա,—ըսեց,—իդա ի՛մ թասն ա։

Ախչիկ ղծըծեր բացեց։ —Ահա՛,—ըսեց,—կտեսնաս, իդա ես էն ախչիկն իմ։ Իգա լա քու թասն ա։ Իղա լա քու տղեն։

Ադ էրկուս նորեն ճանչցան զիրար։ Նստան ադ տեխ մե քիչ ապրան։ Դառնանք թագավորի վրեն։ Ջուաբ տվեցին Փիլիպոս թագավորին, թե մե մարդ մա յոթ ճամփու կցվան շինութեն ի սուկե, մեկ խաթ լա քու պալատից պանցր ա սուկեր ա։

Մեկ օր թագավոր վազիրներում խոսաց.—Հագնինք մեկ ըղնչ-բըրնակ շոր ու էրթանք ադ պալատ տեսնանք իմա՞լ շինութին ա։

Ըխթիար մեշլիս ըսեց.—Թե օր մենք ըղնչբըրի շորերով էրթանք, ի՞նչ պատիվ ունինք։

Թագավոր ասեց.—Ապա ի՞նչ էնինք։

Վազիր ըսեց.—Էմ լէ դու քու շորեր հագի, մեք լէ վոզիրի շոր կհագնինք ու կէրթանք։

Էլան էրկու վոզիր ու թագավոր ու գացին։ Գացին ու մոտե-ցան ըղըրա շինութնին։ Աղջիկ դուս էլավ, զպապ տեսավ, ճանչը-ցավ։

Գնաց կնկա շորեր հանեց, հագավ մարդու շոր։ Էկավ ուր մարդուն խոսաց թե.—Իգա օր էկավ, իմ պապն ա, իմ պապ կի-գա, կըսես՝ «Վերին դեն ընցի»։ Կընցուս էնիկ, բերիս իգաս իմ մոտ, չասի՞ս, թե իգա կնի՛կ ա, հե՛չ բան մա չխոսաս։

Կէլնի թագավոր, կընցնա կէրթա տանտիրոշ մոտ, կնստին թագավորու վոզիրներ ադ տանտիրու մոտ, կմժլին։

Թագավոր ըսեց.—Ինչքա՞ն հարստութեն ունիս օր քու շինու-թին իմնից պանցր ա։

Տանտեր ըսեց թագավորին.—Հ՚իրիկուն պառկելու ժամանակ օր էղավ, մեկ առանձին օդա մը քզիկ կտանիմ, իմ հարստութեն քզիկ ցուց կիտամ։

Իրիկուն պառկելու ժամանակ օր էղավ, տանտեր առավ զթա-գավոր ու տարավ առընձին օդա։

Ըսեց.—Իմ հարստութին քզի ցուց տա՞մ։

Թագավոր ըսեց.—Հա՛, տուր տեսնամ։

Ըսեց.—Դե՛, արի իգա թասով ջուր խմա։

Թասով օր առավ ջուր խմեց, էղավ օսկի ու լցվավ թագավորի ծոց։

Թագավոր ըսեց տանտիրուն թե.—Չէդ թաս տուր ընձիկ։

Ըսեց.—Բաց զքու հ'օ..., մե դաղմե մը զարկիմ քու հ'օ..., թաս կիտամ քզիկ։

Թագավոր խոնջան հ'արցրկեց, օր թե հ'օ... բաներ, աղջիկ-տանտեր ծիծղաց։

Ըսեց.—Տեսա՞ր օր դու թագավորմ՝ էր թասմ՝ ապով քու հ'օ... բացեցիր, իս օր քու աղջիկն իմ, ես էլ ապա օր զէդա թաս օր տեսա, պառկա էդա թասու տիրոջ խետ, առա զէդա թաս։ Հրդա լա թասի տերն ա։ Տղեն բերեց կանգնըցուց։ Հրդա լա իմ տղեն ա օր ես էրկու հոգովցեր ինք։

Նորեն թագավոր կէլնի, շուքր կիտա աստծուց, թե օր իմ աղ-ջիկ մեղավոր չէր, չսպանեցին։

Կէլնի լուսուն թագավոր վոզիրներ կէրթան ուրանց տուն։ Աղ-ջիկ ու տղեն լէ կնստին ուրանց քոջկ ու սարի մեջ, կապրին։